բութիւններին ի տես՝ այդ մարդը չարունակում է, կառչած մնալ իր հայեացքներին: Բայց լաւ է, որ նորէն իրեն տանք խօսքը:

«Հայ ազգն այսօր ստիպողականօրէն կարիք ունի,— սկսում է Մարքվարտ իր Epilogը, կատարելապէս վերածնուելու: Մարդկային իրաւունքների գիտակցութիւնն ունեցող բոլոր ժողովուրդները եւ պետութիւնները — իսկ դրանց շարքումն են ոչ-մահմետականների մեծ մասը — պատուոյ պարտականութիւն ունին, այս ջանասէր եւ բարձր ընդունակութիւնների տէր ժողովուրդի համար մարդավայել գոյութեան պայմաններ ստեղծել եւ երաշխաւորել: Մի ժողովուրդ, որին մինչ ի մահ հալածել են իր թշնամիները»:

Յուստինիանոսից սկսած՝ Բիւզանդիոնը հայերին օգտագործեց որպէս թնդանօթի միս, որպէս սոսկական պարար՝ սեփական մշակոյթը զարգացնելու համար: Այնուհետեւ Հայաստանը ոտան-կոխան եղաւ սելճուկեան վաչկատուն հորդաների կողմից, որոնք իրենց խաշների համար փարթամ արօտներ որոնելու նպատակով Հայաստանի դռները բախեցին: 1071 թուականի օգոստոս 26-ից սկսած (Մանազկերտ) Մեծ ու Փոքր Հայքը հեղեղուեցին վայրենաբարոյ վաչկատուն հորդաներից: Նրանց նժոյգների սմբակների տակ տրորուեց այդ երկիրների փարթամ քաղաքակրթութիւնը, նրանց ժողովուրդն էլ մանդաղուեց անխնայօրէն, որպէսզի հորդաների խաշների համար ընդարձակ արօտատեղիներ բացուին: 1375-ին նոյնը վիճակուեց նաեւ Հայկական Կիլիկիային:

Հայաստանի եւ քաղաքակրթութեան համար Լինկթէմուրից պակաս դաժան պատուհաս չեղաւ օսմանեան տիրապետութիւնը: Օսմանները խրախուսեցին նոմատներին ու նրանց լարեցին բնիկ՝ նստակեաց ու հողագործ աղգաբնակութեան դէմ: Նրանց նպատակն էր՝ բնիկներին մահմետականացնել եւ թրքացնել: Այսպէս վարուեցին նրանք նախ եւ առաջ քրդերի ու աղուանների հետ: Հայերին եւս փորձեցին գլխատել, արմատախիլ անելով նրանց ազնուականութիւնը: Զարմանալ պէտք չէ ուրեմն, որ մենք հայերի, բուլգարների եւ սերբերի մօտ, հակառակ քրդերի, ալբանացիների եւ բոսնիակների, դարերից ի վեր ազնուականութիւն չենք գտնում: Դա մի կողմնակի ապացոյց է այն բանի, թէ ո՛րչափ քիչ թուով ռենեգատներ են տուել այդ ժողովուրդները:

Հիմա թող միտ առնեն մեր օրերի նման տիպերը՝ «օտար» գիտնականի հետեւեալ խօսքը·

«Աւելի մեծ կեղծիք եւ աւելի մոլորութիւն չէ կարող լինել քան այն պնդումը, որ մենք յանախ լսում ենք, թէ՝ իսկապէս հայերը մինչեւ 1878 թուականը իրենք զիրենք շատ լաւ են զգացել տաճկական տիրապետութեան տակ, թէ՝ նրանք շա՛տ լաւ են ապրել տաճիկների հետ: Այդ մասին հարեւանցի գաղափար կազմելու համար կը բաւէ մի հայեացք իսկ նետել Առաքել Դաւրիժեցու պատմութեան վրայ: Վրացիները եւս կը լսէին նման երաժշտութիւն, եթէ իրենց սեփական պատմութիւնը մի փոքր սերտած լինէին»:

Պարսից Շահ Իսմայիլը փորձ էր արել՝ խիստ կարգ եւ կանոն մտցնելու եւ վերջ տալու տիրող աւազակութեանց: Իսկ ի՞նչ արին դրա հանդէպ քիւրդ աշիրաթապետները: Նրանք յամառ տրամադրութիւն ցոյց տուին Շահի ջանքերին եւ գերադասեցին Տաճկաստանի Սուլթան Սելիմ Ա. հաւատարմութեան երդում տալ, պայմանով սակայն, որ չարունակեն պահպանել իրենց «ընկալեալ առանձնաշնորհումները»:

Ապա, այն — իսկապէս որ արդար ու մարդկային — վերաբերմունքը, որ քրիստոնեաների հանդէպ ցոյց տրուեց Մելիք-Շահի օրով, մահմետական տիրապետութեան ամենահաղուադէպ բացառութիւններից մէկը եղած է առհասարակ: Տաճիկը, որպէս երբեմնի վաչկատուն — այդպէս է նաեւ մաճառը — ինքզինքը համարում է տիրող ցեղի ներկայացուցիչ: Նա այդպէս է հանդէս գալիս մանաւանդ այնտեղ, ուր ռայա ժողովուրդները աւելի կամ պակաս խոշոր զանգուածներ են կազմում. ճիշդ այնպէս, ինչպէս որ այսօր Աֆրիկայում ճերմակներն են բնիկների հետ վարւում: Բոլոր մահմետականները — տաճիկներ, քրդեր, չերքէզներ — այն ընդհանուր շահն ունին, որ ըստ կարելւոյն շատ հող կեդրոնացնեն իրենց ձեռքը:

Տաճկական տիրապետութեան տակ բոլոր քրիստոնեաները եւ առհասարակ ոչ-մահմե-